

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ֆ Օ Ն Դ

(Նուր բուր հայերին)

Կարգացի սրտի բերկրութեամբ այն ամեն գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները, որոնք ասվել են և կարդացվել մեծ-յօրելեանի առիթով: Մանաւանդ խորը տպաւորութիւն է թողնում հայր Բենիկի քարոզի վերջին կտորը:

Բայց այդ գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները մի մեծ պակասութիւն ունեն:

Ոչ ոք խօսողներից չսասց, թէ անգրագիտութիւնը մեր հայերիս մէջ ինչ տոկոս է կազմում, արդեօք մութ խաւարի գագաթին չե՞նք հասած, արդեօք կուրուրական ազդ մեզ համարելով չե՞նք հաւատում մի առասպելի: արդեօք ճշտարիտ չէ Շիրվանդադէի ծողրը, թէ մենք Եմիայն մեծ ազդերին նմանվելու յաւակնութիւն ունենք: Ամեն մի խօսող պատմում էր սուրբ Մեսրոպի և ս. Սահակի կեանքը, նրանց գործերը, և ոչ ոք չսասց, թէ մեր արդի դրութիւնը ուսնց Մեսրոպների և Սահակների ի՞նչ է: Միայն հայր Բենիկը ակնարկեց, և յանկարծ տեսանք, որ «ծալվեցին նրա թևերը» թըռչնի թևերի նման, որ ընկնում է վայր երկնքից: Իսկ երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ և խաւար... Կերջագետ կարծես բուր խօսողները ուխտել էին մի բան և իրանց ուխտին մնացին հաւատարիմ՝ լսել դպրոցական ֆօնդի մասին: Եւ զարմանալի, անհաւատալի բան. մեծ յօրելեանի օրը մոռացվեց դպրոցական ֆօնդը... Ես երբէք չեմ հաւատայ, որ խօսողները մոռացել էին դպրոցական ֆօնդը. ոչ. նրանք միայն ուխտել էին լսել, որովհետև խօսել կը նշանակէր դիմել և հանգանակութեան, փչացնել ժողովածաների լաւ արամադրութիւնը. ահա ինչո՞ւ նրանց թէև ըլլ իսկոյն ծալվում էին. և որպէսզի թռչունների նման վայր չը նետվեն, նրանք սաւառնում էին ս. Մեսրոպի և ս. Սահակի կապոյտ երկինքը, որ մեր անցեալն էր և խուսափում էին

ընկնել վայր՝ մեր անխիթար ներկան...

Ի՞նչ արած. երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ ու խաւար... Ֆրանսիական մի աւած կայ, թէ կախվողի տանը չուանի մասին չեն խօսում: Դպրոցական ֆօնդը մեծ յօրելեանին մի տեսակ չուան էր, և քաղաքավարի ճառախօսները պահում էին լուսթիւն այդ չուանի մասին: Երևում է, բարեկամներ, որ ձեր Կովկասում կան այնպիսիները, որոնք կը նախադասեն կախվել չուանից, քան թէ տալ իրանց լուսան որևէ ազգային հիմնարկութեան. ահա ինչո՞ւ ծալվում էին քարոզիչների թևերը, և նրանք վախենում էին թռչունների նման նետվել վայր. և ո՞վ կը ցանկայ վայր նետվել. երկինքը այնչափ կապոյտ է, իսկ երկիրը մութ և խաւար...

Ամեն բան անցաւ չոր և ցամաք. Տօնվում էին հայ տառերը և հայ տպարանը իսկ դպրոցը: Առանց դպրոցի ինչո՞ւ են պէտք հայ տպարանը և հայ տառերը: Տառերին կեանք տուողը դպրոցն է: Բայց ինչո՞վ պահեն և բացվեն դպրոցներ: Պէտք է դպրոցական ֆօնդ: Ուրեմն ինչո՞ւ այդ հարցը լուրջ չը դրվեց մեծ յօրելեանին և ինչո՞ւ մեծ յօրելեարին այդ օրը արին փոքր յօրելեար, փոքր, որովհետև առանց դպրոցի, արտաքոյ դպրոցի հայ տառերը և հայ տպարանը միայն շոայութիւն են...

Միտալ է, հայր Բենիկ, ծալել թևեր և նմանվել թռչունների ու վախենալ, որ չը նետվենք վայր: Կեանքը կուր է, լուսաւորութիւնը՝ ճշմարտութիւն: Գարոզները դպրոցական ֆօնդի անխուսափելի կարեւորութիւնը ամենիս հաւար և սպա ստանք ս. Մեսրոպի տառերը և տանք ժողովուրդին, տանք նրան, որպէսզի նա էլ ունենայ մեզ պէս թևեր, ամուր թևեր, որ չը ծալվեն ոչ մի կողմից: Իսկ եթէ մեզ չաջողվեց՝ կեանքը կուր է, մենք չը ծալենք մեր թևերը, թող մեր թշնամիները նրանց ծալեն, կտորեն, և ոչինչ՝ որ մենք կը նետվենք վայր, որովհետև մութ և խաւար երկրից առ իշտ կտորված և ծալված թևերով մենք պիտի շարունակենք նայել վեր, նայել կապոյտ երկնքին, լուսաւոր աստղե

րին և դրանով տալ հաւատ և ոյժ նոր սե-  
րունդին, նոր կուռղներին. կեանքը կուի-  
է, լուսաւորութիւնը՝ ճշմարտութիւն: Ոչինչ,  
եթէ մենք ևս չը յաղթենք. հաւատանք այդ  
յաղթութեան և մօտեցնենք նրա զալստեան  
օրը: Նա կը գայ միայն դպրոցից և դպրո-  
ցով:

Իսկ դպրոցները կը բացվեն և կը սահ-  
վեն դպրոցական ֆօնդով:

Դպրոցական ֆօնդով...

Գր. Չալխուշեան